ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

«ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-24/88» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով ապրանքների (Հ. Թումանյանի թանգարան-ինստիտուտի համար համակարգիչներ ամբողջը մեկում և ֆոտոնկարահանման խցիկ) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 05.11.2024 թ. ժամը 15:00-ին էլեկտրոնային գնումների e-auction համակարգի միջոցով:

Գնահատող հանձնաժողովի կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝ Հրանտ Մկրտչյան
Հանձնաժողովի անդամ՝ Անահիտ Հակոբյան
Ցոլակ Հակոբյան
Արման Երանոսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը
1	Ա/Ձ Լուսիա Պետրոսյան
2	ՍԵԳ ՍՊԸ
3	ԵՎՐՈՏԵՔՍ ՊԼՅՈՒՍ

3. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

4.1 Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցը ներկայացրել հետևյալ գնային առաջարկը.

Հ/Հ	Գնման գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները					
		Ա/Ձ Լուսիա Պետրոսյան		ՍԵԳ ՍՊԸ		ԵՎՐՈՏԵՔՍ ՊԼՅՈՒՍ	
		Վերջնական առաջարկված գինը, ՀՀ դրամ					
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ
1	600800	498400	598080	599600	599600	-	-
2	342900	262606	315127.20	599000	599000*	265400	318480

*Մասնակցի գնային առաջարկը գերազանցում է նախահաշվային գինը:

5. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին.

5.1 Մասնակիցների կողմից ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման արդյունքների արձանագրման նպատակով կասեցնել նիստը և շարունակել այն հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո, բայց ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հրավերի 8.9 կետի սահմանված ժամկետում՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 3-րդ հարկ, 310 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 06.11.2024թ. ժամը 15:00-ին

6. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության մասին.

6.1 **Ա/Ձ Լուսիա Պետրոսյանի** կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, սակայն դրանք չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես.

6.1.1 Հավելված N 1՝ Դիմում-հայտարարությունը չի կարող համարվել մասնակցի կողմից հաստատված, քանի որ ներկայացված լիազորագիրը արտատպված (սկանավորված) չէ հաստատված բնօրինակ փաստաթղթից:

6.1.2 2-րդ չափաբաժնով առաջարկվող ապրանքի /ֆոտոնկարահանման խցիկ/ տեխնիկական բնութագրում նշված չէ հրավերով պահանջվող՝ արտադրողի պաշտոնական երաշխիքային սպասարկման կենտրոնի տվյալները, բացի այդ լրացված է ավելորդ տեղեկատվություն՝ գնման առարկայի գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը (CPV):

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

7. Գնահատման գործընթացի կասեցման մասին.

7.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել **Ա/Ձ Լուսիա Պետրոսյանին** մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 6.1 կետով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

7.2 Հանձնաժողովի նիստը շարունակել արձանագրված անհամապատասխանությունները մասնակցի կողմից սահմանված ժամկետում շտկելուց հետո՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 3-րդ հարկ, 310 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 12.11.2024թ. ժամը 15:00-ին

7. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

7.1 **Ա/Ձ Լուսիա Պետրոսյանը** սահմանված ժամկետում շտկել է հանձնաժողովի կողմից 6.1 կետով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

8. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված լինելու մասին.

8.1 Հաշվի առնելով, որ 08.11.2024թ. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից շտկվել է գնումների տեղեկագրում հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակը, համաձայն որի Ա/Ձ Լուսիա Պետրոսյանը (ՀՎՀՀ 74438549) 25.10.2024թ. դրությամբ համարվում է ներառված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության և 19-րդ ենթակետի պահանջները՝ **Ա/Ձ Լուսիա Պետրոսյանի** հայտով (Հավելված N 1՝ Դիմում-հայտարարություն) նշված հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

9. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած, այդպիսին չճանաչված և մերժված մասնակիցների վերաբերյալ.

9.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետը և սույն արձանագրության 8.2 կետը՝ մերժել Ա/Ձ Լուսիա Պետրոսյանի հայտը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

9.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը՝ մերժել **ՍԵԳ ՍՊԸ-ի հայտը՝ 1-ին չափաբաժնի մասով և ԵՎՐՈՏԵՔՍ ՊԼՅՈՒՍ-ի հայտը՝ 2-րդ չափաբաժնի մասով:**

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

9.3 **ՍԵԳ ՍՊԸ-ի** հայտը՝ **2-րդ** չափաբաժնի մասով մերժվել է համակագի կողմից՝ գնային առաջարկը նախահաշվային գինը գերազանցելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

10. Գնահատման արդյունքների մասին.

10.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 9.1 կետը՝ գնման գործընթացը **1-ին և 2-րդ** չափաբաժինների մասով հայտարարել չկայացած համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, պայմանագիր չի կնքվում հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

10.2 Հրապարակել գնման ընթացակարգը **1-ին և 2-րդ** չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

10.3 ՀՀ ֆինանսների նախարարության 01.06.2022թ. թիվ 01.1/26-1/10085-2022 և 22.08.2024թ. թիվ 03/26/17716-2024 գրությունների համաձայն, եթե հայտը ներկայացնելու օրվա դրությամբ մասնակիցն արդեն իսկ ներառված է եղել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում և մասնակցի հայտը մերժվել է վերջինիս՝ ցուցակում ներառված լինելու հանգամանքով պայմանավորված, ապա պատվիրատուի ղեկավարի կողմից մասնակցին ցուցակում ներառելու որոշում չի կայացվում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

Գնահատող հանձնաժողով՝

_____ Հրանտ Մկրտչյան

_____ Անահիտ Հակոբյան

_____ Ցոլակ Հակոբյան

_____ Արման Երանոսյան

_____ Արսեն Սողոմոնյան /քարտուղար/